



**Հարկային ընկալումներ.
Տնային տնտեսությունների հետազոտություն**

2016

V1.	Տնային տնտեսության համարը [ԼՐԱՑՆՈՒՄ Է ԶՐՈՒՑԱՎԱՐԸ]	_____
	Զրուցավարի անուն, ազգանունը	_____
V2.	Զրուցավարի կողմը [ԼՐԱՑՆՈՒՄ Է ԶՐՈՒՑԱՎԱՐԸ]	_____
V3.	Խմբավար կողմը [ԼՐԱՑՆՈՒՄ Է ԽՄԲԱՎԱՐԸ]	_____

V4. Հարցազրույցի կարգավիճակը. [ԼՐԱՑՆՈՒՄ Է ՀՌԿԿ ԾՐԱԳՐԵՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԿԱՍ ԽՄԲԱՎԱՐԸ]

Հարցազրույցն ընդունված է	1
Հարցազրույցը որակազրկված է	2

[Զ/Կ. ՈՂԶՈՒՆԵՔ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻՆ (այսուհետ տ/տ), ԵԹԵ ՆԱ ՉԻ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՆՈՒԹՅՆ ԼԵԶՎՈՎ, ԼՐԱՑՐԵՔ ԱՅՐ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻ ՁԵՎԱԹԵՐԹՈՒՄ:

[Զ/Կ. ՀԱՄՈԶՎԵՔ, ՈՐ ԶՐՈՒՑՈՒՄ ԵՔ ԶԱՓԱՀԱՄԻ ՇԵՏ (18 ՏԱՐԵԿԱՆ ԿԱՍ ԲԱՐՁՐ): ՓՈՐՁԵՔ ԱՆԳԻՐ ԱՆԵԼ/ՉԻՇԵԼ ՇԵՏԵՎՅԱԼ ՏԵՔՍՐԸ ԵՎ ԴԻՄԵՔ ԴՈՒՈՐ ԲԱՅՈՂԻՆ ԱՅՆ ԼԵԶՎՈՎ, ՈՐՈՎ ՈՐ ՆԱ ՁԵԶ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ: ԵԹԵ ՆԱ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ՍԱՍՆԱԿՑԵԼ ՀԱՐՑՄԱՆԸ, ԱՊԱ ԼՐԱՑՐԵՔ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻ ՁԵՎԱԹԵՐԹՈՒՄ:

NOTE Բարև Ձեզ, իմ անունը */անուն, ազգանուն/* է և ես ներկայացնում եմ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը: Մենք իրականացնում ենք տնային տնտեսությունների հետազոտություն և կուզենայինք մի շարք հարցեր տալ, որոնք կօգնեն մեզ ավելի լավ հասկանալ մարդկանց կարծիքները հարկային քաղաքականության և հարկային վարչարարության վերաբերյալ: Ձեր տնային տնտեսությունն ընտրվել է պատահականորեն՝ ի թիվս Հայաստանի մոտ 1200 այլ տնային տնտեսությունների, և արդյունքների հավաստիության տեսանկյունից շատ կարևոր է, որ Դուք համաձայնեք մասնակցել այս հարցմանը:

Ձեր բոլոր պատասխանները կամավոր են և կլինեն գաղտնի ու բացարձակապես անանուն: Ձեր անունը չի կապվելու այս հարցման ժամանակ արձանագրված պատասխանների հետ, իսկ հետազոտողները հնարավորություն չեն ունենալու կապել Ձեր ինքնությունը կամ հասցեն ստացված պատասխանների հետ: Մեր կազմակերպության անունից խնդրում եմ աջակցել ինձ կատարել իմ աշխատանքը:

Այս հարցազրույցը կտևի մոտավորապես 30 րոպե: Ինձ անհրաժեշտ կլինի Ձեր աջակցությունը տնային տնտեսության այն չափահաս անդամին որոշելու, ում հետ կվարվի հարցազրույցը: Մա անհրաժեշտ է հարցվողի ընտրության պատահականությունն ապահովելու համար: Շատ կարևոր է, որ մենք հետևենք ստույգ չափանիշների՝ տնային տնտեսության այդ անդամին ընտրելու հարցում:

- T1. Հարցազրույցի ամսաթիվը _____|Օր _____|Ամիս
- T2. Հարցազրույցի սկիզբը _____|Ժամ _____|Րոպե

[Զ/Կ. ՕԳՏԱԳՈՐԾԵԼ 24-ԺԱՄՅԱ ԺԱՄԱԿԱՐԳԸ]

1. ԱՆՁՆԱԿԱՆ ՓՈՐՁԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Մինչև մեր հարցումն սկսելը ներկայացնեմ, թե ինչ է հարկը:
 Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով, համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում: Հարկերը վճարվում են ՀՀ պետական և կամ համայնքների բյուջեներ:

1.1 Ծանոթ եք Հայաստանում գործող հարկերին:

Շատ լավ ծանոթ եմ	1
Ծանոթ եմ որոշ չափով	2
Ծանոթ չեմ	3
Բոլորովին ծանոթ չեմ	4
ԶԳ / ՀՊ	-1 / -2

1.2 Ի՞նչ տիպի հարկերի հետ եք դուք (Ձեր ընտանիքը) առնչվում:
 [Զ/Վ. Յուրաքանչյուր տողի համար մեկ պատասխան]:

Հարկատեսակ	ԱՅՈ	ՈՉ	Զգիտեմ դա ինչ է	ՀՊ
Գույքահարկ				
- Տուն	1	0	3	-2
- Մեքենա	1	0	3	-2
Հողի հարկ	1	0	3	-2
Եկամտային հարկ (օրինակ. աշխատավարձից պահվող հարկը)	1	0	3	-2
ԱԱՀ (ավելացված արժեքի հարկ)	1	0	3	-2
Այլ (նշել _____)	1	0	3	-2
Այլ (նշել _____)	1	0	3	-2

1.3 Արդյո՞ք ունեք գյուղատնտեսական նշանակության հողատարածք:

Այո	1	⇒1.4
Ոչ	0	⇒1.5
ԶԳ / ՀՊ	-1 / -2	

1.4 Այն օգտագործո՞ւմ եք գյուղմթերքի վաճառքից շահույթ ստանալու կամ ապրանքափոխանակության նպատակով:

Այո	1
Ոչ	0
ԶԳ / ՀՊ	-1 / -2

1.5 Զբաղվո՞ւմ եք անասնապահությամբ:

Այո	1	⇒1.6
Ոչ	0	⇒1.7
ԶԳ / ՀՊ	-1 / -2	

1.6 Արդյո՞ք դրանով զբաղվում եք վաճառքից շահույթ ստանալու կամ ապրանքափոխանակության նպատակով:

Այո	1
Ոչ	0
ԶԳ / ՀՊ	-1 / -2

1.7 (Քարտ 1) Ձեր կարծիքով, հետևյալ սահմանումներից ո՞րն է, որ պետք է **ծառայի որպես հարկային մարմնի հիմնական նպատակ**: [Զ/Վ. Ընդունել երկու պատասխան, աջ սյունակում համապատասխանաբար գրառելով պատասխանների առաջին և երկրորդ տարբերակները]:

1	Օգնել հարկ վճարողներին օրենսդրությանը համապատասխան հաշվարկել հարկերը	
2	Հավաքել այնքան հարկեր, որքան ունակ են վճարել բիզնեսը և մարդիկ	

3	Իրականացնել խիստ ստուգումներ՝ բոլոր հարկատուների նկատմամբ	
4	Սմեն գնով հավաքագրել պետական բյուջեով նախատեսված չափով հարկերը	
5	Արդյունավետ ծախսել պետական փողերը	
6	Հարգանքով վերաբերվել ժողովրդին՝ հանդես գալով որպես օրինակելի պետական մարմին	
		ԶԳ / ՀՊ - 1 / -2

1.8(Քարտ 2) Ասացեք խնդրեմ, որքանո՞վ է արդարացված հնարավորության դեպքում հարկերը շրջանցելը (խուսափելը): Օգտագործեք 1-10 սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է "Լիովին արդարացված է" և 10՝ "Բոլորովին արդարացված չէ"

Նշեք կողը	
ԶԳ / ՀՊ	- 1 / -2

1.9 (Քարտ 3) Ձեր կարծիքով, հնարավորության դեպքում մարդիկ շրջանցո՞ւմ են հարկերը: Օգտագործեք 1-10 սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է "Համարյա ոչ մեկը" և 10՝ "Համարյա բոլորը":

Նշեք կողը	
ԶԳ / ՀՊ	- 1 / -2

1.10 Ձեր կարծիքով Հայաստանի համար կիրառելի՞ է այն տեսությունը, ըստ որի ինչքան բարձր են հարկերը, այնքան մարդիկ շատ են շրջանցում դրանք, իսկ երբ կառավարությունն իջեցնում է հարկերը, բոլորը վճարում են, և բյուջեն ավելի շատ գումար է ստանում:

Այո	1
Ոչ	0
ԶԳ / ՀՊ	-1 / -2

1.11 Պատկերացնենք, որ կառավարությունը որոշել է իջեցնել հարկերը: Արդյո՞ք մարդիկ Հայաստանում պատրաստ կլինեն համագործակցության, այսինքն կդադարեն թաքցնել հարկերը:

Այո	1
Ոչ	0
ԶԳ / ՀՊ	-1 / -2

1.12 Կհամաձայն եք, որ հարկերն իջեցվեն, իսկ հարկային օրինախախտումների դեպքում պատասխանատվությունը խստացվի (ավելացվեն խախտողների նկատմամբ տույժ-տուգանքները, այլ պատասխանատվությունը):

Այո	1
Ոչ	0
ԶԳ / ՀՊ	-1 / -2

1.13 Ձեր կարծիքով, որո՞նք են հարկերը չվճարելու կամ թաքցնելու հիմնական պատճառները: [Զ/Վ. Ընդունել մինչև երկու պատասխան]:

Հարկերի բարձր լինելը	1
Հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունը կամ ոչ հստակ լինելը	2
Հարկային սխալ թույլ տալու դեպքում՝ նշանակվող տուգանքների բարձր լինելը, խիստ պատասխանատվության միջոցների կիրառումը	3
Հարկերը հաշվարկելու և վճարելու բարդ ընթացակարգերը, թղթատարությունը	4

Հարկային մարմինների տեսադաշտում հնարավորինս չհայտնվելու ցանկությունը	5
Հարկային մարմնից հստակ տեղեկատվություն, պարզաբանումներ ստանալու դժվարությունները կամ անհնարինությունը	6
Հարկային ստուգումների հաճախակիությունը	7
Անելանելի ֆինանսական վիճակը	8
Անհավասար մոտեցումը տարբեր բիզնեսների նկատմամբ	9
Մյուսներն էլ են այդպես վարվում	10
Այլ (նշել _____)	11
	ՉԳ / չՊ -1 /-2

1.14 Եթե ֆորս-մաժորային (արտակարգ) իրավիճակում (օրինակ, պատերազմական իրավիճակ, համաճարակ, աղետ և այլն) կառավարությանը լրացուցիչ գումարներ են պետք, ո՞րն է դրանց հայթայթման ավելի ճիշտ տարբերակը:

1	Իր ժողովրդից պարտք վերցնելը (օրինակ պետական պարտատուների թողարկում):
2	Այլ երկրներից պարտք վերցնելը, որը հնարավոր է վճարելու են Ձեր հաջորդ սերունդները
3	Այդ ժամանակահատվածի համար բարձրացնել հարկերը, այդ դեպքում հենց Դուք կվճարեք
4	Ոչ պարտք վերցնել, ոչ էլ հարկերը բարձրացնել, այլ հանել վաճառքի պետական դեռևս մնացած ունեցվածքը. շինություններ, գործարաններ, ենթակառուցվածքներ և այլն
5	Այլ (նշել _____)
-1/-2	ՉԳ/չՊ

1.15 Ընդունելի՞ էք համարում հարկատուների այն գործելակերպը, որի նպատակը հարկերը հնարավորինս պակասացնելն է (օրինակ. եթե ընկերությունը գործողի կողքին նորն է բացում և կամ այն մասնատում է՝ փոքր բիզնեսի առավելություններից օգտվելու համար, կամ ձևականորեն աշխատանքի է ընդունում հաշմանդամի, շահութահարկի գծով արտոնություն ձեռք բերելու համար):

Ընդունելի է,	1	ինչու՞ _____
Ընդունելի չէ,	0	ինչու՞ _____
ՉԳ / չՊ	-1 / -2	

1.16. (Քարտ 4) Եթե Դուք լինեիք պետական կառույցներում որոշում կայացնող, որո՞նք կլինեին Ձեր երեք առաջնային գործողությունները, որպեսզի մարդիկ չխուսափեն հարկեր վճարելուց և հետևեն հարկային օրենքներին ու կանոններին: [**Չ/Վ.** Ընդունել մինչև երեք պատասխան, աջ սյունակում համապատասխանաբար գրառելով պատասխանները]:

1	Հարկային օրենքների տեքստերը կդարձնեի առավել պարզ ու հստակ	
2	Կնվազեցնեի օրենսդրական փոփոխությունների հաճախականությունը	
3	Կնվազեցնեի հարկերի քանակը	
4	Կնվազեցնեի հարկերի դրուքաչափերը	
5	Կխստացնեի հարկային խախտումների համար նախատեսված պատժամիջոցները	
6	Կբարելավեի հարկային ծառայողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը	
7	Կներմուծեի հարկային վարչարարության պարզ համակարգ	
8	Հարկ վճարողների համար տնտեսվարման հարկային արտոնություններ կմտցնեի	
9	Այլ (նշել _____)	
	ՉԳ / չՊ	-1/-2

1.17 (Քարտ 5) Օգտագործելով 1-ից 4 սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է «Բոլորովին համամիտ չեմ» և 4-ը՝ «Լիովին համամիտ եմ», խնդրում եմ նշեք, թե որքանով եք համամիտ հետևյալ տեսակետների հետ:

		Բոլորովին համամիտ չեմ	Համամիտ չեմ	Համամիտ եմ	Լիովին համամիտ եմ	ԶԳ/ՉՊ
1.	Եթե Դուք տեսնեք ավելի շատ հանրօգուտ, սոցիալական և այլ ծառայություններ՝ ուստիկանություն, բանակ, անվճար կրթություն և այլն, (պարտադիր չէ, որ դրանք ուղղակիորեն օգուտ բերեն անձամբ Ձեզ) դուք պատրաստակամ կլինեք վճարել ավելի շատ հարկեր:	1	2	3	4	-1/-2
2.	Բոլորը, ներառյալ հովանավորություն վայելողները և «տանիք» ունեցողները, վճարում են հարկերը բոլորի նման:	1	2	3	4	-1/-2
3.	Կառավարությունը պետք է ավելի բարձր դրույքաչափերով հարկեր գանձի հարուստներից	1	2	3	4	-1/-2
4.	Այն հանրային ծառայությունները, որոնք դուք ստանում եք Ձեր վճարած հարկերի դիմաց, իրապես օգտակար են Ձեզ համար:	1	2	3	4	-1/-2
5.	Հարկային դրույքաչափերի, օրենքների և կարգավորումների վերաբերյալ Ձեզ անհրաժեշտ ինֆորմացիան լիովին հասանելի է:	1	2	3	4	-1/-2
7.	Եթե հարկ վճարելը ավելի հեշտ և քիչ ժամանակատար լիներ, մարդիկ ավելի պատրաստակամ կլինեին վճարել դրանք:	1	2	3	4	-1/-2
8.	Հայաստանի հարկային համակարգը կանխատեսելի է: Մենք կարող ենք ճշգրիտ կերպով կանխատեսել, ինչպիսին կլինի մեր հարկային բեռը հաջորդ տարի:	1	2	3	4	-1/-2
9.	Հարկայինի աշխատողների հետ առնչվելը սթրեսային է:	1	2	3	4	-1/-2
10.	Եթե մարդիկ հավատան, որ հարկերն արդար են, նրանք միշտ պատրաստակամ կլինեն վճարել դրանք:	1	2	3	4	-1/-2
11.	Եթե դուք տեսնեք ավելի քիչ կոռուպցիա, դուք պատրաստակամ կլինեք վճարել ավելի շատ հարկեր:	1	2	3	4	-1/-2
12.	Ավելի արդար հարկային համակարգ և հասարակություն ունենալու համար պատրաստ եք հանդուրժել ավելի բարդ հարկային օրենսդրություն:	1	2	3	4	-1/-2
13.	Օրենքից դուրս պահանջվող հարկային կանխավճարների կիրառումը բացասաբար է անդրադառնում հարկային օրինապահության վրա:	1	2	3	4	-1/-2
14.	Վճարիր հարկերը, հանգիստ քնիր	1	2	3	4	-1/-2

1.18 Որտեղի՞ց եք տեղեկատվություն ստանում հարկերի վերաբերյալ:
 [Զ/Վ. Ընդունել բոլոր հնարավոր պատասխանները]:

ՀՀ հարկային ծառայության կայքէջ	1
Տպագիր լրատվամիջոցներ	2
Հարկային պաշտոնյաներ	3
Համացանց	4
Սոցիալական ցանցեր	5
Հեռուստատեսություն	6
Բարեկամներ/ընկերներ	7
Այլ (նշել _____)	8
	ԶԳ/ ՀՊ -1/-2

1.19 Ձեր կարծիքով, արդյո՞ք յուրաքանչյուր քաղաքացի կկարողանա ինքնուրույն հաշվարկել և վճարել իր հարկերը:

Այո	1
Ոչ	0
ԶԳ/ ՀՊ	-1/-2

1.20 Կցանկանա՞ք արդյոք ինքներդ հայտարարագրել (հաշվարկել) ձեր եկամուտը և վճարել հարկերը:

Այո	1
Ոչ	0
ԶԳ/ ՀՊ	-1/-2

1.21 Արդյո՞ք ճիշտ եք համարում հարկային օրենսդրության պահանջները չկատարելու դեպքերում (օրինակ. եթե չեն տրամադրում ՀԴՄ կտրոն) հարկային մարմիններին հայտնելը:

Այո	1
Ոչ	0
ԶԳ/ ՀՊ	-1/-2

1.22 Ձեր կարծիքով, ի՞նչ նպատակներով է կառավարությունը ներկայումս օգտագործում հարկերից ստացված եկամուտները: Խնդրում եմ ընտրեք բոլոր հնարավոր տարբերակները:
 [Զ/Վ. Ընդունել բոլոր հնարավոր պատասխանները]:

1	Հանրային առողջապահություն
2	Հանրային կրթություն
3	Բանակ/ամվտանգություն
4	Ենթակառուցվածքներ
5	Գյուղական համայնքների զարգացում
6	Կենսաթոշակների վճարման համար
7	Աղմինիստրատիվ/վարչական ծախսեր
8	Անձնական նպատակներ
9	Այլ (նշել _____)
-1/-2	ԶԳ / ՀՊ

1.23 (Քարտ 6) Ինչպե՞ս կգնահատեք ՀՀ հարկային ծառայության կողմից մատուցվող հետևյալ ծառայությունները՝ օգտագործելով 1-4 սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է "Բոլորովին օգտակար չէ" և 4-ը՝ "Շատ օգտակար է",
 [Զ/Վ. Յուրաքանչյուր տողում մեկ պատասխան:]

		Բոլորովին օգտակար չէ	Օգտակար չէ	Օգտակար է	Շատ օգտակար է	ԶԳ /ՀՊ
1.	Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ	1	2	3	4	-1/-2
2.	Հարկային հաշիվների դուրսգրման համակարգ	1	2	3	4	-1/-2
3.	ՀՀ հարկ վճարողների որոնման համակարգ	1	2	3	4	-1/-2
4.	Առցանց ծանուցման համակարգ	1	2	3	4	-1/-2
5.	Առցանց նամակագրության համակարգ	1	2	3	4	-1/-2
6.	Օրինապահ հարկ վճարողների գրանցման համակարգ	1	2	3	4	-1/-2
7.	Հարկային օրացույց	1	2	3	4	-1/-2
8.	Էլեկտրոնային փոստային առաքման համակարգ	1	2	3	4	-1/-2
9.	Հեռախոսազանգերի կենտրոն/ Թեժ գիծ	1	2	3	4	-1/-2
10.	Այլ (նշել _____)	1	2	3	4	-1/-2

1.24 Ձեր կարծիքով, ի՞նչ նոր ծառայություններ պետք է մատուցվի Պետական Եկամուտների Կոմիտեի կողմից:

1.25 Ձեր կարծիքով, հասարակությունը իր վճարված հարկերից քանի՞ տոկոսն է ետ ստանում՝ պետության մատուցած հանրային ծառայությունների տեսքով:

0%	1
1%-10%	2
11%-20%	3
21%-30%	4
31%-40%	5
41%-50%	6
Ավելի քան 50%	7
ԶԳ/ՀՊ	-1/-2

1.26 (Քարտ 7) Ասացեք խնդրեմ եմ, թե ի՞նչ չափով եք վստահում հետևյալ կառույցներին: Օգտագործեք 1-5 սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է "Բոլորովին չեմ վստահում", իսկ 5-ը՝ "Լիովին վստահում եմ":

	Լիովին վստահում եմ	Որոշ չափով եմ վստահում	Ոչ վստահում եմ, ոչ չեմ վստահում	Որոշ չափով չեմ վստահում	Բոլորովին չեմ վստահում	ՉԳ/ՉՊ
1. Դատական համակարգ	5	4	3	2	1	-1/-2
2. Ազգային ժողով	5	4	3	2	1	-1/-2
3. Կառավարություն	5	4	3	2	1	-1/-2
4. Նախագահ	5	4	3	2	1	-1/-2
5. Սահմանադրական դատարան	5	4	3	2	1	-1/-2
6. Տեղական ինքնակառավարման մարմիններ	5	4	3	2	1	-1/-2
7. Հարկային ծառայություն	5	4	3	2	1	-1/-2
8. Մաքսային ծառայություն	5	4	3	2	1	-1/-2
9. Ֆինանսների նախարարություն	5	4	3	2	1	-1/-2
10. Մարդու իրավունքների պաշտպան	5	4	3	2	1	-1/-2
11. Դատախազություն	5	4	3	2	1	-1/-2
12. ՀՀ քննչական կոմիտե	5	4	3	2	1	-1/-2
13. Հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողով	5	4	3	2	1	-1/-2
14. Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով	5	4	3	2	1	-1/-2

1.27 Ձեր կարծիքով, որքանո՞վ է ծանր հարկային բեռը հետևյալների համար.

	Շատ ծանր է	Ծանր է	Ծանր չէ	Բոլորովին ծանր չէ	ՉԳ/ՉՊ
1. Քաղաքացիների համար՝ առօրյա կյանքում (ապրանքների, ծառայությունների արժեքներ)	4	3	2	1	-1/-2
2. Քաղաքացիների համար՝ աշխատավարձի հարկումների դեպքում	4	3	2	1	-1/-2
3. Անհատ ձեռներեցների համար	4	3	2	1	-1/-2
4. Միջին բիզնեսի համար	4	3	2	1	-1/-2
5. Խոշոր բիզնեսի համար	4	3	2	1	-1/-2

1.28 Ինչի՞ց եք իմանում, որ դուք հարկեր եք վճարում:(Ընդունել բոլոր հնարավոր պատասխանները)

1	Աշխատավարձի պահումներից (եկամտային հարկ)
2	Ապրանքներ գնելիս (օր. ծխախոտ, ոգելից խմիչք)
3	Հողի հարկ, գույքահարկ վճարելիս
4	Ինքնաթիռի տոմս գնելիս կամ այլ ծառայությունների համար վճարելիս
5	Այլ (_____)
-1/-2	ԶԳ/ՀՊ

1.29 Արդյո՞ք դուք հպարտ եք, որ հարկեր եք վճարում:

1	Այո, որովհետև ես կատարում եմ իմ քաղաքացիական պարտքը
2	Այո, որովհետև դրանով լուծվում են հանրային խնդիրներ
3	Ոչ, որովհետև դրանք չեն ծառայում իրենց նպատակին
4	Ոչ, որովհետև չգիտեմ դրանք իրականում ինչ նպատակի են ծառայում
5	Այլ (_____)
-1/-2	ԶԳ/ՀՊ

1.30 Տեղյակ եղե՞լ եք, որ ՀՀ ԱԺ-ում քննարկվում էր բոլոր հարկային օրենքներն ամփոփող Հարկային օրենսգրքի նախագիծը

Այո, լսել եմ	1
Լսել եմ և որոշակի չափով հետևում եմ դրա քննարկման ընթացքին	2
Գիտեմ և շահագրգիռ ձևով փորձում եմ մասնակցել և ազդել դրա ընթացքին, մարդկանց ու կազմակերպությունների համար ընդունելի լինելու համար	3
Տեղյակ չեմ	4
Տեղյակ չեմ և չեմ էլ հետաքրքրվում	5
	ԶԳ/ՀՊ -1/-2

1.31 Ինչ եք կարծում հարկային օրենսգրքի ընդունումը որքանով կնպաստի գործարար միջավայրի բարելավմանը:

Բոլորովին չի նպաստի	1
Ավելի շուտ չի նպաստի	2
Առանձնապես ազդեցություն չի ունենա	3
Ավելի շուտ կնպաստի	4
Շատ կնպաստի	5
	ԶԳ/ՀՊ -1/-2

1.32 Ինչ եք կարծում հարկային օրենսգրքի ընդունումը որքանով կնպաստի ներդրումների ներգրավմանը:

Բոլորովին չի նպաստի	1
Ավելի շուտ չի նպաստի	2
Առանձնապես ազդեցություն չի ունենա	3
Ավելի շուտ կնպաստի	4
Շատ կնպաստի	5
	ԶԳ/ՀՊ -1/-2

1.33 Հարկային բարեփոխման որ ուղղությունն էք համարում առանցքային՝ գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից

հարկային բեռի թեթևացում (ներառյալ դրույքաչափերի կրժատում)	1
հարկային վարչարարության, այդ թվում ստուգումների մեղմացում	2
հարկային այլ խթանների միջոցով ուղղակի ներդրումների աճ	3

ՉԳ/ՀՊ	-1/-2
-------	-------

1.34 Հարկային վարչարարության բարելավման որ ուղղությունն էք համարում առանցքային գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից.

հարկային ընթացակարգերի հստակեցում	1
հարկային ընթացակարգերի ծախսատարության և ժամանակատարության կրճատում	2
հարկային մարմնի անձնակազմի ամբողջական թարմացում	3
հարկ վճարողի գործունեությանը անհարկի չմիջամտում	4
հարկային հաշվարկի ձևերի պարզեցում	5
Այլ _____	6
ՉԳ/ՀՊ	-1/-2

1.35 Ձեր կարծիքով ինչն է հիմնականում հարկվում Հայաստանում (ընդունել բոլոր հնարավոր պատասխանները)

Գույքը	1
Եկամուտները	2
Հողը	3
Ապրանքները	4
Ծառայությունները	5
Այլ _____	6
ՉԳ/ՀՊ	-1/-2

1.36 Հարկային օրենքների էկոլոգիզացման, այսինքն հարկային բեռը բնությանը վնաս պատճառող ապրանքների և ծառայությունների արտադրության վրա դնելու, մոդելի կիրառման դեպքում հակված կլինե՞ք հարկեր ավելի պատշաճ վճարել:

Միանշանակ այո	1
Ավելի շուտ այո	2
Ազդեցություն չի ունենա	3
Ավելի շուտ ոչ	4
Ոչ	5
(Չգիտեմ)	-1
(Հրաժարվում եմ պատասխանել)	-2

1.37 Տնտեսական գործունեության արդյունավետ պլանավորման տեսանկյունից՝ ի՞նչ

պարբերականությամբ է նպատակահարմար, որ ուժի մեջ մտնեն հարկային օրենսդրության հերթական փոփոխությունները:

Վեց ամիսը մեկ	1
Տարին մեկ	2
Երեք տարին մեկ	3
Ավելի քան երեք տարին մեկ	4
ՉԳ/ՀՊ	-1/ -2

1.38 Եթե Հայաստանում կիրառվի հարկային համաներում, ամնիստիա և բոլորը կարողանան հայտարարագրել նախորդ տարիներին թաքցված հարկերը, սակայն պայմանով, որ դրանից հետո սկսելու են օրինական ձևով հարկեր վճարել: Արդյոք դա կբերի նրան, որ մարդիկ կհայտարարագրեն իրենց թաքցրած հարկերը ու կսկսեն ավելի արդար ձևով իրենց հարկերը վճարել

Այո	1
Ոչ	0

1.39 Աշխարհի շատ երկրներում կիրառվում են տեղեկատվության փոխանակման ավտոմատ համակարգեր, ինչը գործարքների, ստացած եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է դարձնում իր ապրելու կամ ընկերության գտնվելու երկրի հարկային մարմինների համար: Արդյոք կուզենաք, որ Հայաստանը միանա այդ բոլոր միջազգային պայմանագրերին

Այո, օր առաջ	1
Այո, սակայն նախապես մեծ իրազեկման աշխատանք տանելով իր երկրի մարդկանց և կազմակերպությունների հետ՝ այդ ձևով աշխատել սկսելու հետևանքների վերաբերյալ	2
Ոչ, քանի որ դա կլինի անձնական տվյալների հրապարակում	3
Ոչ, քանի որ դա Հայաստանում մարդկանց և կազմակերպություններին կգրկի իրենց միջոցներից	4
Այլ (նշել _____)	5
ԶԳ / ՀՊ	-1 / -2

1.40 Որքանո՞վ եք համամիտ հետևյալ տեսակետների հետ: Խնդրում եմ գնահատեք 1-ից 4 սանդղակի օգնությամբ, որտեղ 1-ը նշանակում է «Բոլորովին համամիտ չեմ» և 4-ը՝ «Լիովին համամիտ եմ»

		Բոլորովին համամիտ չեմ	Համամիտ չեմ	Համամիտ եմ	Լիովին համամիտ եմ	ՉԳ/ՀՊ
1	Օրենքները կիրառվում են հավասար կերպով բոլոր հարկատուների նկատմամբ:	1	2	3	4	-1/-2
2	Ավելի արդար հարկային համակարգ և հասարակություն ունենալու համար պատրաստ եք հանդուրժել ավելի բարդ հարկային օրենսդրություն:	1	2	3	4	-1/-2
3	Գնումներ կատարելիս նախընտրում եմ գնել ապրանքը ավելի թանկ, բայց օրինապահ վաճառողից, քան էժան, բայց հարկերից խուսափողից:	1	2	3	4	-1/-2
4	Երբ ապրանքի կամ ծառայության դիմաց իմ վճարած գումարի դիմաց համապատասխան կտրոն/փաստաթուղթ չեն տալիս, ես պահանջում եմ այն:	1	2	3	4	-1/-2
5	Եթե ականատես լինեմ հարկերից խուսափման դեպքերի, կտեղեկացնեմ հարկային մարմիններին	1	2	3	4	-1/-2
6	2015թ. Հայաստանում ընդունված նոր Սահմանադրությունը (փոփոխությունները), պաշտամենտական կառավարման անցնելը ավելի վստահելի միջավայր կձևավորի և մարդկանց մոտ կավելանա հարկերը վճարելու պատրաստակամությունը	1	2	3	4	-1/-2
7	Եթե Հայաստանի արտաքին պարտքը հասնի համախառն ներքին արդյունքի 70 տոկոսին, այսինքն՝ վտանգավոր ու անթույլատրելի սահմանի, ապա պատրաստ կլինեմ ավելի շատ հարկեր վճարել՝ թույլ չտալով ՀՀ միջազգայնորեն սնանկ ճանաչելը	1	2	3	4	-1/-2
8	Եթե Հայաստանի արտաքին պարտքը հասնի 70 տոկոսի, այսինքն՝ վտանգավոր ու անթույլատրելի սահմանի, պատրաստ կլինեմ ավելի ուշ թոշակի գնալ կամ ավելի ցածր նպաստ ստանալ կամ ավելի ցածր աշխատավարձ ստանալ, որպեսզի հարկային դրույթաչափերը կառավարությունը չբարձրացնի	1	2	3	4	-1/-2
9	Ըստ կուտակային կենսաթոշակների մասին օրենքի այժմ բոլոր երիտասարդ աշխատողները պետք է իրենց աշխատավարձի մի մասը պարտադիր կուտակեն իրենց ծերության համար, նաև այդ նույն	1	2	3	4	-1/-2

	նպատակով իրենց կյանքի ընթացքում ստանալով նաև գումար ՀՀ պետական բյուջեից: Այս պայմաններում ես ավելի եմ հակված հարկեր վճարելուն:					
10	Եվրասիական տնտեսական միություն մուտք գործելուց հետո, ես ավելի եմ հակված հարկեր վճարելու՝ այդ կառույցի առջև դրված ֆինանսական խնդիրների լուծման համար	1	2	3	4	-1/-2

2. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

2.1 Ո՞րն է առավել ճիշտ նկարագրում Ձեր կարգավիճակը:

[Ձ./Վ. Ընդունեք միայն մեկ պատասխան]:

1	Թոշակատու եմ (և չեմ աշխատում)	⇒ 2.3
2	Սովորող եմ (և չեմ աշխատում)	
3	Տնային տնտեսուհի եմ (և չեմ աշխատում)	
4	Գործազուրկ եմ	
5	Վարձու աշխատող եմ	⇒ 2.2
6	Անհատ ձեռնարկատեր/գործատու եմ	
7	Ինքնազբաղված եմ	
8	Ի վիճակի չեմ աշխատել	⇒ 2.3
9	Այլ (նշել _____)	
-1 / -2	ՉԳ / չՊ	

2.2 Ո՞րն է ավելի լիարժեք բնութագրում Ձեր աշխատանքային գործունեության հիմնական ոլորտը: [Ձ./Վ. Ընդունեք միայն մեկ պատասխան:]

Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1	
Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	2	
Մշակող արդյունաբերություն	3	
Էլեկտրականության, գազի, ջրաբերության և լավորակ օդի մատակարարում	4	
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	5	
Շինարարություն	6	
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	7	
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	8	
Կացության և հանրային սննդի կազմակերպում	9	
Տեղեկատվություն և կապ	10	
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	11	
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	12	
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	13	
Վարչարարական և օժանդակ գործունեություն	14	
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	15	
Կրթություն	16	
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	17	
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	18	
Սպասարկման այլ ծառայություններ	19	
Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտ-ում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	20	
Միջազգային կազմակերպություններ	21	
Այլ (նշել _____)	22	
	ՉԳ/չՊ	-1/-2

2.3 Ասացեք խնդրեմ, ո՞րն է Ձեր ամուսնական կարգավիճակը:

1	Ամուսնացած
2	Համատեղ բնակություն
3	Ամուսնալուծված
4	Առանձին բնակություն
5	Այրի
6	Երբեք չամուսնացած
7	Այլ (նշել _____)
-1 / -2	ՉԳ / ՀՊ

2.4 Ո՞րն է Ձեր ստացած ֆորմալ կրթության ամենաբարձր մակարդակը:

1	Չունի ֆորմալ կրթություն կամ տարրականից ցածր
2	Տարրական կրթություն (3-4 տարի)
3	Հիմնական կրթություն(8-ամյա կամ ներկայումս 9- ամյա)
4	Միջնակարգ (ատեստատ/արհեստագործական/ միջին մասնագիտական) կրթություն (10-ամյա կամ ներկայումս 12-ամյա կրթություն, այդ թվում նախնական մասնագիտական
5	Միջին մասնագիտական
6	Բակալավրի աստիճան
7	Մագիստրոսի աստիճան (կամ բարձրագրագույն կրթության դիպլոմ)
8	Գիտության թեկնածու / գիտության դոկտոր
-1 / -2	ՉԳ/ ՀՊ

2.5 (Քարտ 8) Անցյալ ամիս որքա՞ն է կազմել **Ձեր անձնական մաքուր** (հարկերը հանած) դրամական եկամտի ընդհանուր գումարը: Հետևյալ խմբերից ո՞րում է այն տեղավորվում: Խնդրում եմ հաշվի առեք անցյալ ամսվա եկամտի բոլոր աղբյուրները:

1	600 001 ՀՀ դրամից ավելի
2	380 001- 600 000 ՀՀ դրամ
3	190 001- 380 000 ՀՀ դրամ
4	106 001- 190 000 ՀՀ դրամ
5	40 001- 106 000 ՀՀ դրամ
6	24 001- 40 000 ՀՀ դրամ
7	Մինչև 24 000 ՀՀ դրամ
8	(0)
-1 / -2	ՉԳ / ՀՊ

2.6 (Քարտ 8) Անցյալ ամիս որքա՞ն է կազմել **Ձեր ընտանիքի մաքուր** (հարկերը հանած) դրամական եկամտի ընդհանուր գումարը: Հետևյալ խմբերից ո՞րում է այն տեղավորվում: Խնդրում եմ հաշվի առեք անցյալ ամսվա եկամտի բոլոր աղբյուրները:

1	600 001 ՀՀ դրամից ավելի
2	380 001- 600 000 ՀՀ դրամ
3	190 001- 380 000 ՀՀ դրամ
4	106 001- 190 000 ՀՀ դրամ
5	40 001- 106 000 ՀՀ դրամ
6	24 001- 40 000 ՀՀ դրամ
7	Մինչև 24 000 ՀՀ դրամ
8	(0)
-1 / -2	ՉԳ / ՀՊ

2.7 Դուք կամ Ձեր ընտանիքի անդամներից որևէ մեկը վերջին մեկ տարում զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ կամ հանդիսացել է/հանդիսանում է սեփականատեր որևէ առևտրային կազմակերպությունում:

Այո	1
Ոչ	0
ԶԳ / ՀՊ	-1 / -2

2.8 Հայաստանում ապրում են մի շարք ազգություններ: Դուք Ձեզ ո՞ր ազգի ներկայացուցիչ եք համարում:

[Զ/Վ. Տարբերակները չկարդալ, ընդունել միայն մեկ պատասխան:]

1	Հայ
2	Եզդի
3	Ուկրաինացի
4	Հույն
5	Լեհ
6	Ռուս
7	Բելառուս
8	Մոլդովին
9	Այլ (նշել _____)
-1 / -2	ԶԳ / ՀՊ

2.9 Կուզենա՞ք աշխատել որպես հարկային տեսուչ:

Այո	1	Ինչո՞ւ _____ _____
Ոչ	0	Ինչո՞ւ _____ _____
ԶԳ / ՀՊ	-1 / -2	

Շնորհակալություն

Ըստ ընդունված կարգի, հարցազրույցների մի մասի անցկացման փաստը, կայացման օրից որոշ ժամանակ անց, պետք է ստուգվի մեր կազմակերպության կողմից: Նախօրոք պարզ չէ, թե որոնք կստուգվեն: Հնարավոր է, որ դա Ձերը չլինի, բայց խնդրում են թողնել Ձեր հեռախոսահամարը (քաղաքային, բջջային) և չզարմանաք, եթե մեր հետազոտական կենտրոնից զանգահարեն կամ այցելեն Ձեզ: Նման ստուգման միակ նպատակը պարզելն է, արդյո՞ք հարցումը կատարվել է որակի չափանիշներին համապատասխան: Սակայն, բոլոր դեպքերում, մենք ապահովում ենք Ձեր պատասխանների գաղտնիությունը:

PH1.	Տվեք խնդրեմ Ձեր քաղաքային և/կամ բջջային հեռախոսահամարները: Երաշխավորում ենք, որ դրանք կօգտագործվեն միայն Ձեզ հետ կապվելու համար:		
	Ում հարցնել	Բնակավայրի / Օպերատորի կոդ	Հեռախոսահամար

T3. Հարցազրույցի ավարտը: Զ/Վ.ՕԳՏԱԳՈՐԾԵԼ 24-ԺԱՄՅԱ ՌԵԺԻՍԸ

Ժամ |__|__| |__|__|րոպե